ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ ԱԼԵՔՍԻ Բ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԵՎ ԲՈՐԻՍ ԵԼՑԻՆԻՆ

Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը Ռուսաստանում տեղի ունեցած աղետալի դեպքերի կապակցությամբ դեկտեմբերի 7-ին ցավակցական հեռագրեր հղեց Համայն Ռուսիո և Մոսկվայի Պատրիարք Ալեքսի Բ-ին և Ռուսաստանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինին:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ԵՎ ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Ձերդ Սրբություն, Սիրելյալ եղբայր ի Քրիստոս,

Խոր վշտով լսեցինք ռուս ժողովրդին պատահած դժբախտության և ռուս ազգի հարյուրավոր որդիների և դուստրերի մահվան լուրը:

Հայ Առաքելական Եկեղեցին և ողջ հայ ժողովուրդը ձեզ հետ միասին սգում է նրանց ողբերգական մահը:

Սուրբ Էջմիածնից Մենք մեր աղոթքն ենք հղում մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, որպեսզի ամենակարող Աստվածը խաղաղության մեջ պահի նրանց հոգիները և արժանի դարձնի Աստծո արքայությանը:

Աղոթում ենք Աստծուն, որպեսզի Ամենաբարձրյալը պահպանի Ռուսաստան երկիրը բոլոր աղետներից:

Աղոթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԲՈՐԻՍ ԵԼՑԻՆԻՆ

Ձերդ Գերազանցություն,

Խոր վշտով և տխրությամբ լսեցինք ռուս ժողովրդի հարյուրավոր որդիների և դուստրերի մահվան լուրը:

Հայ Առաքելական Եկեղեցին և ողջ հայ ժողովուրդը կիսում է ռուս ժողովրդին և ռուսական պետությանը հասած փիշտը: Աղոթում ենք մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, նրանց հոգիների խաղաղության և Աստծո արքայությանն արժանանալու համար: Սր. Էջմիածնում աղոթում ենք Աստծուն, որպեսզի Ամենաբարձրյալը պահպանի ողջ ռուս ժողովրդին և Ռուսաստանի պետությունը բոլոր աղետներից և դժբախտություններից, որպեսզի համբերություն և իմաստություն տա նրա ղեկավարներին հայրենքին ծառայելու դժվարին գործում:

Աղոթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ